

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

### ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

Ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքն անձի ար-  
դար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարրերից մեկն  
է, որի խախտումը սոցիալական մեծ չարիք է: Վերջինս անդառնալի  
վնաս է պատճառում ոչ միայն դատական քննության առարկա վեճի  
մասնակիցներին, այլև իրեն իրավական, ժողովրդավարական և սո-  
ցիալական հոչակած պետությանը:

Քաղաքացիական գործերի տևական քննությունը պետության  
կողմից իր քաղաքացիներին իրավական պաշտպանության արդյունա-  
վետ միջոցներ տրամադրելու էական խոչընդոտ է: Արդյունավետ դա-  
տական պաշտպանությունը ենթադրում է ռստ էության ճիշտ դատա-  
կան ակտի կայացում այդ ողջամիտ ժամկետներում:

Դատարաններում քաղաքացիական գործերի կուտակման և դան-  
դաղ քննության պատճառները տարաբնույթ են: Դրանց թվում կարելի  
է նշել, օրինակ, դատարանների վարույթում գտնվող գործերի և դատա-  
վորների քանակի անհամապատասխանությունը, գործին մասնակցող  
անձանց չներկայանալը դատական նիստերին, դատական ծանուցում-  
ների ոչ կատարյալ կառուցակարգերը, գործին մասնակցող անձանց  
կողմից իրենց դատավարական իրավունքները չարաշահելու լայն  
հնարավորությունների առկայությունը և այլն:

Դատական պրակտիկայի ամփոփումը, ինչպես նաև քաղաքա-  
ցիական գործեր քննող դատավորների շրջանում անցկացված հար-  
ցումները թույլ են տալիս եզրակացնել, որ ողջամիտ ժամկետներում  
քաղաքացիական գործերի քննությունը խոչընդոտող կարևորագույն  
պատճառներից է ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օ-  
րենսգրքում<sup>1</sup> քաղաքացիական գործերի քննության պարզեցված դա-  
տավարական ընթացակարգերի անկատարությունը:

Ճիշտ է՝ Օրենսգիրքը նախատեսում է արագացված դատաքննությ-  
ան կառուցակարգ, որը հիմնականում կիրառվում է այն գործերով, ո-  
րոնք վերաբերում են չնչին գումարների բռնագանձման վերաբերյալ  
պահանջներին (50000 դրամը չգերազանցող) կամ վիճահարույց չեն  
(հայցն ընդունվում է պատասխանողի կողմից, կամ առարկություններ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՊՏ, 1998.09.09/20(53), ՀՕ-247: Այսուհետ՝ Օրենսգիրք:

չեն ներկայացվում հայցի դեմ, ծանրաբեռնված չեն ապացուցման ենթակա հանգամանքներով և ապացուցողական նյութով, ակնհայտորեն կապված չեն իրավունքի մասին վեճի հետ կամ գուրկ են իրավական հիմքերից, իրենց փաստական հանգամանքներով նման են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999 թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-129 հոդվածներով նախատեսված արագացված դատաքննության ինստիտուտի կիրառման կարգի մասին» թիվ 9 որոշման շրջանակներում ներկայացված օրինակներին: Շատ հաճախ արագացված դատաքննություն կիրառվում է նաև այն դեպքերում, երբ նախքան գործի դատաքննությանն անցնելն առաջանում է գործի վարույթը կարճելու անհրաժեշտություն՝ հայցվորի հայցից հրաժարվելու կամ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով: Դատարանները արագացված դատաքննություն խիստ հազվադեպ կիրառում են նաև այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք գրավոր համաձայնություն են ներկայացնում՝ գործով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ կամ նախապես տեղեկացնում են դատարանին գործի քննությանը չմասնակցելու մասին:

Պրակտիկայում հանդիպող գործերի և Օրենսգրքի 125 հոդվածում սպառիչ կերպով նշված՝ արագացված դատաքննություն կիրառելու հիմքերի համադրված վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ, ելնելով առանձին (թեկուզև պարզ) գործերի փաստական հանգամանքներից և գործի շրջանակներում ստեղծված «դատավարական իրավիճակներից», արագացված դատաքննության կիրառումն անհնար է: Ակնհայտ է, որ դատարանը չի կարող գործերի մեծ մասով իրավունքի մասին վեճի բացակայության, հայցի ակնհայտորեն հիմնվոր կամ ակնհայտորեն անհիմն լինելու մասին հետևություն անել, քանի դեռ գործում բացակայում է պատասխանող կողմի դիրքորոշումը (որը, ի դեպ, ըստ գործող կանոնակարգման, կարող է ներկայացվել դատարան ընդհուպ մինչև գործի քննությունն ավարտելու պահը): Բազմաթիվ դեպքերում հայցվորները միջնորդում են գործը քննել իրենց բացակայությամբ կամ կիրառել արագացված դատաքննություն, սակայն վերջինս չի կիրառվում պատասխանողի համապատասխան հայտարարության բացակայության կամ դատական նիստին չներկայանալու պայմաններում:

Նշված և մի շարք այլ հանգամանքներ օբյեկտիվ հրամայական են դարձրել քաղաքացիական դատավարություն ներմուծելու այնպիսի կառուցակարգ, որը դատարաններին հնարավորություն կտա քննելու և լուծելու ակնհայտորեն պարզ և համեմատաբար փոքր հայցագնի վերաբերող գործերը՝ շրջանցելով «ավանդական» ֆորմալ դատավարության մի շարք պահանջներ, որոնք կապված են գործը դատաքննության նախապատրաստելու, փաստական և ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու, ապացույցները դատական նիստում հետազո-

տելու, կայացված վճիռը դատական նիստում հրապարակելու, գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու սահմանված ընթացակարգերի հետ:

Հարկ է նշել, որ արդարադատության եվրոպական մի շարք համակարգեր (Գերմանիա, Նիդերլանդներ, Անգլիա և Ուելս և այլն), հիմք ընդունելով Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի կողմից 2007 թ. հուլիսի 11-ին ընդունված թիվ 861/2007 կանոնակարգը՝ «Փոքր չափի պահանջների քննության մասին»<sup>2</sup>, մշակել, ներդրել և հաջողությամբ կիրառում են նման կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս էապես բեռնաթափել առաջին ատյանի դատարանները՝ հնարավորություն ընձեռելով թեթևացված ընթացակարգով լուծված գործերի քննության ընթացքում խնայված ժամանակն օգտագործելու բարդ, ծախսատար և ժամանակատար գործերի քննությունն առավել արդյունավետ կազմակերպելու և արդարադատության որակն էապես բարձրացնելու համար:

Հիմք ընդունելով նշված Կանոնակարգը և դրա պահանջներն ազգային օրենսդրության շրջանակներում կենսագործած երկրների արդեն բավականին հարուստ փորձը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) արագացված դատաքննության, հեռակա դատաքննության և վճարման կարգադրության վարույթի հետ մեկտեղ նախատեսվել է քաղաքացիական գործերի պարզեցված ընթացակարգ, որը կարգավորվել է «Գործերի քննությունը պարզեցված վարույթի կարգով» վերտառությամբ 37-րդ գլխի շրջանակներում (հ.հ. 258-264)<sup>3</sup>:

Վարույթի քննարկվող տեսակը մշակելիս հիմք են ընդունվել հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

ա) պարզեցված վարույթի կարգով կարող են քննվել փոքր հայցագին ունեցող գործերը, իսկ կողմերի համաձայնությամբ՝ նաև այլ գործեր, պայմանով, որ նման ընթացակարգով գործի քննությունը չի հանգեցնում գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքի որևէ բաղադրատարրի ոտնահարման,

բ) հայցագինը «փոքր» որակելու համար որպես ուղենիշ պետք է ծառայի դատավորների վարույթում գտնվող գործերի կազմի, առանձնահատկությունների, այդ գործերով կողմերի ակտիվության աստիճանի վերլուծությունը: «Փոքր» որակվող հայցի արժեքը սահմանելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն այն, որ ինչքան նախանշված արժեքը բարձր է, այնքան ավելի շատ սուբյեկտ կարող է օգտվել ճկուն, քիչ

<sup>2</sup> Տե՛ս «Regulation (EC) № 861/2007 of the European Parliament and of the Council of 11 July 2007 establishing a European Small Claims Procedure» - <http://eur-lex.europa.eu/legal content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32007R0861&from=EN>

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը տես [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_525118627441\\_Qagh.dat\\_final-11.01.2016.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_525118627441_Qagh.dat_final-11.01.2016.pdf)

ծախսատար և արագ ընթացակարգից, այլև հաշվի առնել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և դատական իշխանության նկատմամբ վստահության աստիճանը,

զ) քննարկվող ընթացակարգի մասին նորմերը պետք է սահմանեն վարույթի թույլատրելիության պայմաններ՝ ներառյալ այնպիսի իրավիճակները, որոնք բացառում են դրա կիրառումը՝ բացասաբար անդրադառնալով դատական պաշտպանության արդյունավետության վրա,

դ) վարույթը պետք է լինի ճկուն, հնարավորություն տա չկաշկանդվելու «ավադական» փուլային վարույթին հատուկ մի շարք ֆորմալ պահանջներով,

ե) գործի քննությունը պետք է իրականացվի առանց բանավոր լսումներ կազմակերպելու՝ գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծագում է գործին մասնակցող անձանց հետ որոշակի հարցեր քննարկելու անհրաժեշտություն: Գործը քննող դատավորը, իրականացնելով «գործի կառավարման» գործառույթը, պետք է ազատ լինի դրա քննության եղանակը որոշելու հարցում,

զ) ընթացակարգը պետք է հնարավորություն նախատեսի կիրառելու այնպիսի ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կընձեռեն խնայելու դատարանի և գործին մասնակցող անձանց ժամանակը, և որոնց կիրառումը հնարավոր է ապահովել հաշվի առնելով դատարանների տեխնիկական հագեցվածությունը,

է) գործի լուծման համար անհրաժեշտ փաստական և ապացուցողական նյութի լրիվությունը, ինչպես նաև դրա ներկայացման օպերատիվությունն ապահովելու համար պետք է սահմանվեն կողմերի չհայտարարված պահանջները, առարկությունները, դրանք հիմնավորող պահանջները, դատարանի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, ինչպես նաև սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական նյութը չընդունելու դատարանի լիազորությունը,

ը) պարզեցված վարույթի կարգով գործն ըստ էության լուծող դատական ակտերի հրապարակման ընթացակարգը պետք է հնարավորինս պարզեցվի՝ բացառելով կայացված վերջնական դատական ակտը դատական նիստում հրապարակելու անհրաժեշտությունը և միևնույն ժամանակ ապահովելով դրա հասանելիությունը (հրապարակայնությունը),

թ) նպատակահարմար է վերանայել պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու, վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետները և գործով վերաքննիչ բողոք բերելու հիմքերը:

Հաշվի առնելով նշված ելակետային մոտեցումները՝ Նախագծի 259 հոդվածում սահմանվել է այն **գործերի շրջանակը, որոնք կարող են քննվել պարզեցված վարույթի կարգով:**

Նախագծի 259 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխանը ստանալու, իսկ այդպիսին չներկայացնելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին, եթե ներկայացվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջ, և բացակայում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքները»: Նույն հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս պարզեցված վարույթի կարգով քննել նաև այլ գումարի բռնագանձման հետ չկապված գործեր, եթե առկա է գործին մասնակցող անձանց գրավոր համաձայնությունը, և բացակայում են նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքները:

Ըստ էության՝ Նախագիծը սահմանել է պարզեցված վարույթի թույլատրելիության մի քանի պայմաններ, որոնց առկայությունը պետք է ակնհայտ լինի գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կայացնելու համար:

1. **Գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջով գործը** կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով, **եթե հայցագինը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը** (2 մլն դրամ): Նշված գումարային մեծությունը, իհարկե, որոշակի առումով պայմանական է: Այն սահմանելիս հաշվի են առնվել մի շարք հանգամանքներ՝

ա) դատարանների վարույթում գտնվող այն *գործերի քանակը*, որոնց շրջանակներում, որպես կանոն, ներկայացվում են նշված գումարը չգերազանցող վարկային, փոխառության, կապի և կոմունալ ծառայությունների մատուցման, սպառողներին էլեկտրաէներգիայի մատակարարման, գազամատակարարման և նմանատիպ այլ պարտավորություններով չվճարված պարտքի բռնագանձման վերաբերյալ պահանջներ (տարբեր հաշվարկներով դրանց կշիռը մեկ դատավորի վարույթում գտնվող գործերի կազմում տարեկան 60-80 % է): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ կատեգորիայի գործերով հայցադիմումի պատասխան, որպես կանոն, չի ներկայացվում, իսկ եթե նույնիսկ ներկայացվում է, այն չի պարունակում հայցը գործում առկա գրավոր ապացույցների հիման վրա քննելը խոչընդոտող քիչ թե շատ ծանրակշիռ փաստարկներ, ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ: Դեռ ավելին, գործերի մեծ մասով դրանք դատաքննության նախապատրաստելու, քննելու, վճիռը հրապարակելու նպատակով հրավիրվող, դատական նիստերին գործին մասնակցող անձինք չեն ներկայանում՝ միջնորդելով գործը քննել իրենց բացակայությամբ կամ առանց նման միջնորդություններ ներկայացնելու:

բ) Որոշ առումով տվյալ հարցի լուծման համար ուղենիշային նշա-

նակություն են ունեցել *օտարերկյա փորձը, Եվրոպական չափանիշները և երկրի սոցիալական-տնտեսական վիճակը*:

Ուշագրավ է, որ փոքր չափի դրամական հատուցման հայցերի թվին են դասվում Նիդերլանդներում՝ 25000 Եվրոն, Անգլիայում և Ուելսում՝ 10000 ֆունտը, Գերմանիայում՝ 5000 Եվրոն չգերազանցող գումարի վերաբերյալ պահանջները: Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատավարության օրենսգրքով պարզեցված վարույթ կիրառելու գումարային շեմն իրավաբանական անձանց դեմ ներկայացվող հայցերով սահմանված է 500000, իսկ ընդդեմ անհատ ձեռնարկատերերի ներկայացվող հայցերով՝ 250000 ռուբլի (մոտ 7000 և 3500 Եվրո՝ համապատասխանաբար)<sup>4</sup>: Միննույն ժամանակ, վերը հիշատակված Եվրոպական կանոնակարգում որպես «պահանջի փոքր չափ», որը թույլատրելի է դարձնում պարզեցված վարույթի կիրառումը, առաջարկվում է առնվազն 2000 Եվրոն չգերազանցող գումարը (հոդվ. 2, մաս 1):

Հաշվի առնելով ՀՀ-ում տիրող *սոցիալական-տնտեսական վիճակը և դատական համակարգի նկատմամբ վստահության մակարդակը*, Նախագծի հեղինակային խումբը նպատակահարմար է գտել համաձայնելու միջազգային փորձագետ Ս. Ն. վան Ռիի տեսակետին և պարզեցված վարույթ կիրառելու թույլատրելիության առավելագույն գումարային շեմ սահմանել Եվրոպական կանոնակարգով նախատեսված նվազագույն չափը, որը մի կողմից թույլ կտա քննարկվող ընթացակարգը հասանելի դարձնել մեծ թվով գործերով խնայելով դատավարական ռեսուրսները, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնել բնակչության հարաբերական հարստությունը և դատական համակարգի նկատմամբ վստահության աստիճանը<sup>5</sup>:

**2. Գումարի բռնագանձման հետ չկապված պահանջի կապակցությամբ հարուցված գործը** կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով՝ անկախ հայցագնի չափից կամ հայցի գնահատման ենթակա լինելուց, բացառապես **գործին մասնակցող անձանց գրավոր համաձայնությամբ**: Կարևոր է նկատի ունենալ, որ նման համաձայնություն չի պահանջվում գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջ ներկայացված լինելու պարագայում, երբ դատարանը կարող է որոշում կայացնել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին նույնիսկ կողմերի կամքին հակառակ՝ հիմք ընդունելով ներկայացված պահանջի չափը և պարզեցված վարույթը բացառող հանգամանքների բացակայության փաստը: Բոլոր մյուս դեպքերում պարզեցված վարույթի կարգով գործը քննելու համար պետք է ստացվի կողմերի գրավոր հա-

<sup>4</sup> Ի դեպ, նշված շեմը մեծացվել է 02.03.2016 թ. փոփոխություններով: Մինչ այդ սահմանված էր 300000 ռուբլի իրավաբանական անձանց և 100000 ռուբլի անհատ ձեռնարկատերերի համար:

<sup>5</sup> Տե՛ս «Reform of the Armenian Code of Civil Procedure», Report by prof. dr. C. H. van Rhee, Maastricht University, November 2015, էջ 5:

մաձայնությունը: Այն կարող է դատարան ներկայացվել հայցադիմումին, հակընդդեմ հայցին, հայցադիմումի պատասխանին կից կամ նախնական դատական նիստի ընթացքում<sup>6</sup>:

**3. Գործը կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով, եթե բացակայում են վարույթի տվյալ տեսակը բացառող հանգամանքները:** Նշված հանգամանքները միևնույն ժամանակ դիտվում են որպես պարզեցված վարույթը դադարեցնելու և ընդհանուր հայցային վարույթի կարգով գործի քննությանն անցնելու հիմքեր (263 հոդվ., մաս 1):

Ըստ Նախագծի 259 հոդվածի 3-րդ մասի՝ գործը չի կարող քննվել պարզեցված վարույթի կարգով հետևյալ դեպքերում:

1) *Առկա է գործին մասնակցող անձանց, վկաներին կամ փորձագետին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտություն:* Նման սահմանափակում նախատեսելիս հաշվի են առնվել ոչ միայն պարզեցված վարույթների իրավական կարգավորման օտարերկրյա փորձը, այլև Ամերիկյան իրավունքի ինստիտուտի (ԱԻԻ) կողմից 2004 թվականի մայիսին և Մասնավոր իրավունքի միասնականացման միջազգային ինստիտուտի (ՄԻՄԻ) կողմից 2004 թվականի ապրիլին ընդունված «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներ»-ի 16.4 հոդվածում ձևակերպված ելակետային դրույթները. «Կողմերից, վկաներից և փորձագետներից ցուցմունք ձեռք բերելը պետք է տեղի ունենա դատարանի սովորական ընթացակարգերի համաձայն: Կողմը պետք է իրավունք ունենա իրականացնելու լրացուցիչ հարցաքննություն անմիջականորեն մեկ այլ կողմի, վկայի կամ փորձագետի հետ, որը սկզբում հարցաքննվել է դատարանի կամ վարույթի այլ մասնակցի կողմից»<sup>7</sup>:

Ըստ էության՝ քննարկվող սահմանափակում նախատեսելը պայմանավորված է բանավոր ապացույցներ հետազոտելիս և նշված դատավարական գործողությունները կատարելիս կողմերի մրցակցային իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Թե՛ գործող և թե՛ նախագծային կարգավորումները բացառում են դատարանի կողմից դատական նիստից դուրս բանավոր ապացույցներ, դատական հանձնարարության կարգով ստացված ապացույցներ, փորձագետի եզրակացություն հետազոտելու, առանց արտագնա նիստ հրավիրելու

<sup>6</sup> Նախագծի 260 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կարող է կայացվել նաև նախնական դատական նիստում:

<sup>7</sup> [Http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf](http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf): Հարկ է նկատել, որ փաստադրոյթի նախաբանում նշվում է, որ **սկզբունքները** առևտրային վեճերը դատական կարգով լուծելու **անդրազգային ստանդարտներ են**, որոնք հավասարապես կիրառելի են քաղաքացիական վեճերի շատ այլ տեսակների լուծման համար և կարող են քաղաքացիական դատավարության ոլորտը բարեփոխելու հետագա նախաձեռնությունների հիմք հանդիսանալ:

տեղազննություն կատարելու հնարավորությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենսդրորեն երաշխավորվում է ապացույցների ձեռքբերմանն ուղղված միջնորդությունների քննարկմանը և ապացույցների հետազոտմանը գործին մասնակցող անձանց մասնակցելու, իրենց դիրքորոշումը, փաստարկներն ու առարկությունները ներկայացնելու, հարցեր տալու, այդ կապակցությամբ լրացուցիչ փաստեր և ապացույցներ ներկայացնելու՝ մեծ հաշվով «լսված լինելու» իրավունքը, որը տվյալ դեպքերում կարող է իրացվել միայն «ավանդական ընթացակարգով» դատական նիստում: Հարկ է նկատել, որ եթե գործին մասնակցող անձանց, վկաներին կամ փորձագետին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտությունը ծագում է պարզեցված վարույթի ընթացքում գործին մասնակցող անձի կատարած դատավարական գործողությունների արդյունքում, դատարանը պետք է դադարեցնի պարզեցված վարույթը և սահմանված կարգով անցում կատարի ընդհանուր հայցային վարույթի:

2) *Դատարանը վարույթ է ընդունել հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայց, որը չի կարող քննվել պարզեցված վարույթի կարգով:* Նման սահմանափակում նախատեսելիս հաշվի է առնվել այն, որ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու պահի դրությամբ չի սպառվում հակընդդեմ հայց ներկայացնելու կամ երրորդ անձի կողմից վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջով հայց ներկայացնելու օրենքով երաշխավորված հնարավորությունը<sup>8</sup>:

Այն դեպքերում, երբ պարզեցված վարույթ կիրառելու թույլատրելիության այլ պայմանների առկայության պարագայում ներկայացվում է հակընդդեմ հայց կամ երրորդ անձի հայց, որը դատարանի որոշմամբ ընդունվում է վարույթ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար, դատարանը կարող է որոշում կայացնել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին բացառապես այն իրավիճակում, երբ վարույթ ընդունված հայցերն ինքնին կարող են քննվել այդ կարգով (ներկայացվել է 2 մլն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման

---

<sup>8</sup> Ըստ Նախագծի 34 հոդվածի 1-ին մասի՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են հայցադիմում ներկայացնելու միջոցով գործի մեջ մտնել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, իսկ Նախագծի 36-38-րդ գլուխներով նախատեսված կարգով քննվող գործերով մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը: Նախագծի 261 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Պարզեցված վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց կարող է ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում», այն է՝ մինչև գործին մասնակցող անձանց նյութաիրավական պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը և դրանք հիմնավորող ապացույցները դատարան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը:

մասին պահանջ, և բացակայում են վարույթը բացառող մյուս հանգամանքները):

Այն իրավիճակներում, երբ հակընդդեմ հայցը կամ երրորդ անձի հայցը ներկայացվում է պարզեցված վարույթի շրջանակներում և դատարանի որոշմամբ ընդունվում է վարույթ, դատարանը պետք է լուծի պարզեցված կարգով գործի քննությունը շարունակելու իրավաչափության հարցը՝ կրկին հիմք ընդունելով վարույթ ընդունված հայցը ևս այդ կարգով քննելու հնարավորությունը: Եթե հակընդդեմ հայցը կամ երրորդ անձի հայցն ինքնին չի կարող քննվել պարզեցված կարգով, դրանք պետք է քննվեն ընդհանուր հայցային վարույթի կարգով:

3) *Առկա է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու անհրաժեշտություն:* Տվյալ սահմանափակումը հիմնականում պայմանավորված է վարույթի ընթացքում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Նախ Նախագիծը երաշխավորում է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց հնարավորությունը՝ մտնելու գործի մեջ մինչև դատաքննության ավարտը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա կամ կարող է հանգեցնել նման իրավունքների և պարտականությունների ծագմանը (35 հոդվ., մաս 1): Այդ իրավունքի իրականացումը պետք է ապահովվի՝ անկախ վարույթի տեսակից: Մինչդեռ պարզեցված վարույթի կիրառման պարագայում դա անելը գործնականում անհնար է առանց մրցակցության և իրավահավասարության սկզբունքների ոտնահարման:

Երկրորդ՝ դատարանը չի կարող հետևություն անել վարույթը բացառող մյուս հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ, քանի դեռ չի կայացրել այլ անձանց վարույթ ներգրավելու մասին համապատասխան որոշում և սահմանված կարգով հնարավորություն չի տվել նրանց ներկայացնելու իրենց դիրքորոշումը, որը, օրինակ, անխուսափելիորեն կարող է առաջացնել փորձաքննություն նշանակելու, վկաներ հարցաքննելու կամ գործին մասնակցող անձանց ցուցմունքները լսելու անհրաժեշտություն:

Ասվածը չի բացառում նախնական դատական նիստում երրորդ անձանց ներգրավելուց և նրանց դիրքորոշումները ստանալուց հետո պարզեցված վարույթի կարգով գործի քննությունն իրականացնելու մասին որոշում կայացնելու հնարավորությունը: Սակայն այդպիսի որոշում կարող է կայացվել բացառապես պարզեցված վարույթի թույլատրելիության այլ պայմանների առկայության դեպքում: Դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ նախնական դատական նիստում դատարանը կատարում է ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում

(157 հողվ., մաս 1) կամ հայցվորի միջնորդությամբ գործի քննությանը ներգրավում է նոր պատասխանող (158 հողվ., մաս 1):

4) *Ներկայացվել է խմբային հայց*, որը կարող է քննվել բացառապես Նախագծի 23-րդ գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով:

5) *Անհրաժեշտ է պարզել գործին մասնակցող անձանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր*: Պարզեցված վարույթը բացառող սովյալ կանոնը նախատեսելիս հաշվի են առնվել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու հետ կապված դատավարական կանոնները: Թեև «հաստատման ծանրությունը» Նախագիծը դրել է գործին մասնակցող անձանց վրա, այնուամենայնիվ չի հրաժարվել այն մտտեցումից, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու, դրանց նկատմամբ նյութական օրենսդրությունը ճիշտ կիրառելու բեռը կրում է դատարանը: Նախագծի 56 հողվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով: Պարզեցված վարույթի կառուցակարգը ենթադրում է, որ դրա կիրառումը հնարավոր է բացառապես այն դեպքերում, երբ հայցվորը, ներկայացնելով որոշակի նյութաիրավական պահանջ, դրա հիմքում դրել (վկայակոչել) է կիրառման ենթակա իրավական նորմերով անհրաժեշտ բոլոր փաստերը, իսկ պատասխանողը սահմանված ժամկետում պատասխան չի ներկայացրել կամ ներկայացրել է այնպիսի պատասխան, որը չի կարող ազդել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակի վրա: Այլ կերպ ասած՝ գործի քննությունը չի կարող իրականացվել պարզեցված վարույթի կարգով, եթե դատարանի համոզմամբ հայցի և/կամ դրա դեմ ներկայացված առարկության, հակընդդեմ հայցի և/կամ դրա դեմ ներկայացված պատասխանի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակը լիարժեք չէ, ապացուցման առարկան հարկ է լրացնել նյութական օրենսդրությամբ կարևորվող այլ հանգամանքներով, որի պարագայում գործը պետք է նախապատրաստվի դատաքննության ընդհանուր կանոններով՝ ներառյալ՝ կողմերի հետ քննարկվի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը, այդ հանգամանքների ապացուցման պարտականությունը բաշխելու և ապացույցներ ներկայացնելու համար անհրաժեշտ ժամկետները, ինչպես նաև կայացվի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում նաև ապահովելու գործի՝ պարզեցված վարույթի կարգով քննելու հարցում ուղղակիորեն

շահագրգռված հայցվորների կողմից «որակյալ» հայցադիմումներ ներկայացումը: Պարզեցված վարույթի կարգով հայցի արագ քննության և բավարարման ձգտող հայցվորն ի սկզբանե պետք է հոգ տանի վիճելի իրավահարաբերությունը ճիշտ որակելու, կիրառման ենթակա նորմերի շրջանակը որոշելու, այդ նորմերով արժևորվող փաստերը վկայակոչելու մասին:

Նախագծի 259 հոդվածի 4-րդ մասը կարգավորում է այն իրավիճակները, երբ հայցադիմումում միացված են մի քանի փոխկապակցված պահանջներ, որոնց մի մասը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, իսկ մյուսը՝ ոչ: Մասնավորապես սահմանվում է. «Մեկ հայցադիմումում միացված մի քանի փոխկապակցված պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, իսկ մյուսը՝ ընդհանուր հայցային վարույթի կարգով, դատարանը քննում է ընդհանուր հայցային վարույթի կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենսգրքի 115 հոդվածով սահմանված կարգով միացված պահանջներն առանձնացնում է առանձին վարույթներում»: Հարկ է նշել, որ տվյալ կարգավորումը չի բացառում նաև գործին մասնակցող անձանց համաձայնությամբ տվյալ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հնարավորությունը, որն ամրագրված է Նախագծի 259 հոդվածի 2-րդ մասով: Նման համաձայնության բացակայության պարագայում դատարանը կա՛մ գործը պետք է քննի ընդհանուր հայցային վարույթի կարգով, կա՛մ, միացված պահանջներն առանձնացնելով առանձին վարույթներում, որոշում կայացնի համապատասխան մասը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին: Մյուս մասը համապատասխանաբար կարող է քննվել ընդհանուր հայցային վարույթի կարգով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսդրության, Նախագիծը չի նախատեսել 262 հոդվածով սահմանված թույլատրելիության պայմաններին բավարարող գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դատարանի պարտականություն: Նախագծի 262 հոդվածի թե՛ 1-ին և թե՛ 2-րդ մասերի պայմաններին համապատասխանող գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը դատարանը լուծում է դատական հայեցողության իրավունքով: Անկասկած, եթե կողմը ներկայացնում է գործը պարզեցված վարույթի կարգով քննելու միջնորդություն, այն պետք է լուծվի (բավարարվի կամ մերժվի) պատճառաբանված որոշմամբ: Սակայն նման միջնորդության բացակայության պայմաններում հարցը լուծվում է բացառապես դատարանի հայեցողությամբ: Նման կարգավորում նախատեսելիս Նախագծի հեղինակային խումբը ելել է այն հայեցակարգային դրույթից, որ քննարկվող ընթացակարգը պետք է օժտված լինի որոշակի ճկունությամբ, և գործը քննող դատավորը, իրականացնելով «գործի կառավարման» իր գործառույթը, պետք է ազատ լինի

դրա քննության եղանակը որոշելու հարցում:

Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանը կայացնում է որոշում, որը ոչ ուշ, քան հաջորդ օրը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կարող է կայացվել՝

1. պատասխանողից հայցադիմումի պատասխանը ստանալու, իսկ այդպիսին չներկայացնելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում (259 հոդվ., մաս 1), եթե պարզեցված վարույթի թույլատրելիության պայմաններն ակնհայտ են վարույթի տվյալ փուլում,

2. նախնական դատական նիստի ընթացքում (260 հոդվ., մաս 2), եթե պարզեցված վարույթի կիրառման հնարավորությունն ի հայտ է գալիս նախնական դատական նիստում կամ 153 հոդվածի 1-ին մասով նախատեսված նախապատրաստական կամ կողմերի տնօրինչական գործողությունների կատարման արդյունքում (այլ անձանց ներգրավում, հայցի փոփոխություն, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ճշգրտում և այլն):

Նախագծի 261 հոդվածը սահմանում է նաև այն **գործողությունները, որոնք պետք է կատարեն գործին մասնակցող անձինք գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո:**

Նախ նշենք, որ Նախագիծը սահմանափակել է հայցի առարկան և հիմքը փոփոխելու հայցվորի հնարավորությունը՝ սահմանելով գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում կայացնելուց հետո տվյալ տնօրինչական գործողությունը կատարելու արգելք (261 հոդվ., մաս 4): Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ վարույթի թույլատրելիության պայմանների առկայության մասին դատարանը հետևություն կարող է անել ներկայացված հայցադիմումի կապակցությամբ պատասխանողի դիրքորոշումը ստանալուց հետո, իսկ վերջինս ներկայացվում է հայցադիմումում ձևակերպված (կամ նախնական նիստում ճշգրտված) հայցի առարկայի և հիմքի կապակցությամբ: Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում կայացնելուց հետո հայցի առարկան և/կամ հիմքը փոփոխելու իրավունք հայցվորին վերապահելու պարագայում հայցի դեմ պաշտպանվելու պատասխանողի իրավունքը էապես կոտնահարվեր: Բացի այդ, նաև կխարխլվեր պարզեցված վարույթի ողջ ընթացակարգը, որը ենթադրում է բավականին սեղմ ժամկետներում վեճն ըստ էության լուծող դատական ակտի կայացում սահմանված ժամկետներում ներկայացված և գործում առկա գրավոր փաստական և ապացուցողական նյութի հիման վրա:

Գործի լուծման համար անհրաժեշտ փաստական և ապացուցո-

ղական նյութի լրիվությունը, ինչպես նաև դրա ներկայացման օպերատիվությունն ապահովելու համար Նախագծով սահմանվել են կողմերի չհայտարարված պահանջները, առարկությունները, դրանք հիմնավորող պահանջները դատարանի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, ինչպես նաև սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական նյութը չընդունելու դատարանի լիազորությունը: Կարգավորման հիմքում դրվել է «Անդրագային քաղաքացիական դատավարության սկզբունքներ»-ի 7 հոդվածում ձևակերպված ելակետային դրույթը, համաձայն որի՝ ողջամիտ ժամկետներում վեճի վերաբերյալ վճիռ կայցնելու դատարանի պարտականության կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով ընթացակարգային կանոններով և դատարանի կարգադրություններով կարող են սահմանվել ողջամիտ ժամկետներ և դատավարական սանկցիաներ՝ կողմերի և նրանց ներկայացուցիչների նկատմամբ նման կանոնները և կարգադրությունները չպահպանելու համար, ինչը չի կարող ներման արժանանալ առանց հիմնավոր պատճառի<sup>9</sup>:

Ըստ այդմ, Նախագծի 261 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում գործին մասնակցող անձինք պետք է ներկայացնեն իրենց նյութափրավական պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները: Ընդ որում, ելնելով գործի առանձնահատկություններից՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ տվյալ ժամկետը կարող է երկարաձգվել:

Քանի որ, ընդհանուր կանոնի համաձայն, հակընդդեմ հայցը կարող է ներկայացվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը (Նախագծի 129 հոդվ., մաս 1), պարզեցված վարույթի դեպքում Նախագիծը սահմանել է նաև հատուկ կանոն, ըստ որի՝ հակընդդեմ հայցը պարզեցված վարույթի շրջանակներում կարող է ներկայացվել մինչև 261 հոդվածի 1-ին մասով սահմանված կամ դատարանի կողմից երկարաձգված ժամկետի ավարտը (261 հոդվ., մաս 2): Ենթադրվում է, որ նույն ժամկետում պատասխանողը կարող է ներկայացնել նաև հայցի դեմ իր նյութափրավական առարկությունները՝ ներառյալ դրանց հիմքում ընկած փաստերը, դրանք հիմնավորող ապացույցները և նման ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները:

Նախագծի 261 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված ժամկետների խախտմամբ վկայակոչված փաստերը հաշվի չեն առնվում, իսկ դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց, բացառությամբ

<sup>9</sup> Տե՛ս <http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf>

յամբ այն դեպքերի, երբ դրանք վկայակոչողը (ներկայացնողը) հիմնավորում է սահմանված ժամկետում տվյալ փաստը վկայակոչելու, դատավարական փաստաթուղթը կամ ապացույցը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում ապահովելու գործին մասնակցող անձանց կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական և ապացուցողական նյութը ներկայացնել լրիվ ծավալով և այնպիսի ժամկետներում, որոնք թույլ կտան դատարանին բավականին սեղմ ժամկետում կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ: Սահմանված դատավարական սանկցիան, իր հերթին, էապես կնպաստի կողմերի դատավարական կարգապահության աստիճանի բարձրացմանը և նվազագույնի կհասցնի կողմերի՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր վկայակոչելու և դրանք հաստատող ապացույցներ ներկայացնելու իրավունքների չարաշահման հնարավորությունը: Բացի այդ, սահմանված ժամկետում ներկայացված փաստական և ապացուցողական նյութի վերլուծությունը դատարանին հնարավորություն կտա լրացված դատավարական նյութի հիման վրա ևս մեկ անգամ ստուգելու պարզեցված վարույթի կարգով տվյալ գործը քննելու իրավաչափությունը:

Հաշվի առնելով այն, որ Նախագծի 261 հոդվածով նախատեսված գործողությունների կատարման արդյունքում դատավարական իրավիճակը կարող է այնպես փոխվել, որ ի հայտ գա գործը պարզեցված վարույթի կարգով քննելուն խոչընդոտող որևէ հանգամանք՝ Նախագծի 263 հոդվածը նախատեսել է պարզեցված վարույթը դադարեցնելու և ընդհանուր հայցային վարույթի անցում կատարելու հիմքեր: Մասնավորապես սահմանվել է. «Եթե սույն օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանգամանքներն ի հայտ են եկել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կայացնելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև վերջնական դատական ակտ կայացնելը, դատարանը որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով քննելու մասին և սույն օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով հրավիրում է նախնական դատական նիստ»:

**Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու կարգն** ունի մի շարք էական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են վարույթի տվյալ տեսակի պարզեցված բնույթով:

Նախ, ի տարբերություն ընդհանուր հայցային վարույթի, Նախագիծը սահմանում է գործի քննությունն ու լուծումը որոշակի ժամկետում ավարտելու իմպերատիվ պահանջ: Մասնավորապես, ըստ 262 հոդվածի 6-րդ մասի, դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում վերջնական ակտը պետք է կայացնի 261 հոդվածի 1-ին մասով սահմանված՝ փաստական և ապացուցողական նյութը ներկայացնելու կողմերի համար սահմանված ժամկետն ա-

վարտվելու օրվանից մեկամսյա ժամկետում<sup>10</sup>:

Երկրորդ՝ Ընդհանուր կանոնի համաձայն՝ գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ (Նախագծի 262 հոդվ., մաս 1):

Ուշագրավ է, որ Նախագծի 262 հոդվածի 1-ին մասի բառացի մեկնաբանությունից բխում է, որ այստեղ խոսքը ոչ թե ապացույցների հետազոտման նպատակով հրավիրվող «ավանդական» դատական նիստի մասին է, այլ այնպիսի նիստի, որը հրավիրվում է բացառապես դատարանի հայեցողությամբ և նպատակ է հետապնդում գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ (բացատրություններ) գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի և դրանք հաստատող ապացույցների մասին: Այդուհանդերձ կարծում ենք, որ եթե դատարանը որոշում է կայացնում գործի քննությունն իրականացնել դատական նիստում, տվյալ նիստի խնդիրը պետք է լինի գործում առկա գրավոր ապացույցների հետազոտումը, որի ընթացքում էլ դատարանը կարող է ստանալ գործի լուծման համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանումը: Քննարկման առարկա կարող են դառնալ նաև պարզեցված վարույթի թույլատրելիության և ընդհանուր հայցային վարույթի անցում կատարելու անհրաժեշտության հարցը, նիստի ընթացքում ներկայացված վերաբերելի նոր փաստերի, ապացույցների և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների թույլատրելիությունը:

Երրորդ՝ որոշակի առանձնահատկություն ունի դատական նիստին գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցության հարցը: Մասնավորապես, Նախագծի 262 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ դատարանը թույլատրում է նրան մասնակցել դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում առկա է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ: Մեր կարծիքով, տվյալ կանոնակարգումը լրամշակման կարիք ունի այն առումով, որ անպատասխան է թողնում հարցը, թե ինչպես դատարանը պետք է պարզի տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառ-

---

<sup>10</sup> Նշված ժամկետը սահմանելիս ուղենիշային է եղել Եվրոպայի խորհրդարանի և խորհրդի թիվ 861/2007 կանոնակարգը՝ «Փոքր չափի պահանջների քննության մասին», որի 7 հոդվածով վճռի կայացման համար առաջարկվում է 30-օրյա ժամկետ: Թե որքանով է արդարացված նման սեղմ ժամկետը, կարծում ենք, ցույց կտա քննարկվող իրավանորմի կիրառման փորձը:

մամբ դատական նիստին մասնակցող անձի ինքնությունը և լիազորությունների ծավալը: Նախագծում չլուծված հարց է նաև նման պայմաններում դատական նիստն արձանագրելու առանձնահատկությունը:

Նախագծի 262 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործի քննությունն առանց դատական նիստն իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում գործին մասնակցող անձինք ծանուցվում են միայն վերջնական դատական ակտի կայացման օրվա մասին, իսկ ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ գործի քննությունը դատական նիստում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում գործին մասնակցող անձինք ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին՝ նշումով, որ նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Հետևում է, որ գործի քննությունն առանց դատական նիստ հրավիրելու կամ նիստում իրականացնելու հարցը դատարանը պետք է լուծի գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշմամբ, որը մի դեպքում պետք է պարունակի նշում վերջնական դատական ակտի կայացման օրվա մասին, մյուս դեպքում՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Դատական նիստում գործի քննությունն իրականացնելու դեպքում դատական նիստն ավարտելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է վերջնական դատական ակտի կայացման օրը և պարզաբանում է այն հրապարակելու և գործին մասնակցող անձանց ուղարկելու կարգը:

Գործնական կարևոր նշանակություն ունի պարզեցված վարույթի կարգով գործի քննությունն իրականացնելիս, ինչպես նաև վերջնական դատական ակտը կայացնելուց հետո ստացված միջնորդությունների լուծման դատավարական կարգը:

Գործի քննության ընթացքում և դրանից հետո գործին մասնակցող անձինք կարող են ներկայացնել տարաբնույթ միջնորդություններ: Դրանք պետք է քննվեն և լուծվեն պարզեցված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Նախագծի 261 հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ ապացույցների ձեռքբերմանն ուղղված միջնորդությունը գործին մասնակցող անձը պետք է ներկայացնի փաստական և ապացուցողական նյութը ներկայացնելու համար սահմանված ժամկետում: Հակառակ պարագայում նման միջնորդությունը դատարանի որոշմամբ վերադարձվում է այն ներկայացնող անձին, եթե վերջինս չի հիմնավորում սահմանված ժամկետում միջնորդությունը իրենից անկախ պատճառներով ներկայացնելու անհնարիությունը (261 հոդվ., մաս 3):

Ինչ վերաբերում է այլ միջնորդություններ ներկայացնելու դեպքերին, կարծում ենք, որ դրանց լուծման դատավարական կարգը կախված է միջնորդության տեսակից և դրա լուծման ընդհանուր կանոններից:

Մի շարք միջնորդություններ կարող են քննվել ու լուծվել բացառապես դատական նիստում: Օրինակ՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ապահովման միջոցը ձևափոխելու (Նախագծի 123 հոդվ.), հայցի ապահովումը վերացնելու (124 հոդվ.) կամ հակընդդեմ ապահովում պահանջելու (125 հոդվ., մաս 2) մասին միջնորդությունները, ինչպես նաև մի շարք միջնորդություններ, որոնք ներկայացվում են գործով վերջնական ակտ կայացնելուց հետո (օրինակ՝ լրացուցիչ վճիռ կայացնելու (182 հոդվ.), վճռի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճռի կատարման եղանակն ու կարգը փոփոխելու (ԴԱՀԿ մասին օրենքի 22 հոդվ.), կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը վերականգնելու (ԴԱՀԿ մասին օրենքի 24 հոդվ.), կատարողական թերթի կրկնօրինակ տալու (ԴԱՀԿ մասին օրենքի 25 հոդվ.) վերաբերյալ): Նման միջնորդությունները պետք է քննվեն դրանց քննարկման համար հատուկ հրավիրված դատական նիստերում՝ Նախագծի 140 հոդվածով սահմանված երաշխիքների պահպանմամբ, քանի որ դրանց լուծման այլ կարգ Նախագիծը չի նախատեսում: Ընդ որում, այն դեպքերում, երբ դատարանը որոշում է կայացրել պարզեցված վարույթի կարգով գործի քննությունը դատական նիստում իրականացնելու վերաբերյալ, վարույթի ընթացքում ներկայացված միջնորդությունները կարող են քննվել հենց այդ նիստում:

Եթե գործին մասնակցող անձը ներկայացրել է այնպիսի միջնորդություն, որն ըստ օրենքի լուծվում է դատական նիստից դուրս, առանց գործին մասնակցող մյուս անձանց դիրքորոշումը լսելու (օրինակ՝ հայցի ապահովման (120 հոդվ., մաս 2), վճռի կատարման ապահովում կիրառելու (181 հոդվ., մաս 2), դատական ակտում թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու (183 հոդվ., մաս 2) մասին), ապա, բնականաբար, այդ միջնորդությունը քննարկելու համար դատական նիստ չպետք է հրավիրվի:

Էական առանձնահատկություններ ունի պարզեցված վարույթի կարգով կայացվող **վերջնական դատական ակտի հրապարակման, գործին մասնակցող անձանց հանձնելու (ուղարկելու), օրինական ուժի մեջ մտնելու և բողոքարկելու կարգը:**

Նախ նշենք, որ նախագիծը մշակելիս հեղինակային խումբը հրաժարվել է պարզեցված վարույթի կարգով քննվող գործով կայացված վճռին ներկայացվող պահանջները «թեթևացնելու» առաջարկից<sup>11</sup> ելնելով այն մտավախությունից, որ դա կարող է մեկնաբանվել որպես պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքի խախտում: Կարծում ենք՝ նման մոտեցումը խորը մտածված չի եղել: Ուշագրավ է, որ ՌԴ թե՛ քաղաքացիական, թե՛ արբիտրաժային դատավա-

<sup>11</sup> Տե՛ս «Reform of the Armenian Code of Civil Procedure», 2015, էջ 10:

րական օրենսգրքերում 2016 թվականին կատարված փոփոխություններով<sup>12</sup> պարզեցված վարույթների կարգով քննվող գործերով նախատեսվել է վճռահատության «պարզեցված» կարգ: Այսպես, ըստ ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232.4 և արբիտրաժային օրենսգրքի 229 հոդվածների՝ պարզեցված վարույթի կարգով քննվող գործով դատարանի վճիռը կայացվում է դրա եզրափակիչ մասը ստորագրելու միջոցով, որը կցվում է գործի նյութերին և տեղադրվում է դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրը: Ընդ որում, դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձի պահանջով հնգօրյա ժամկետում կազմել և գործին մասնակցող անձանց տրամադրել պատճառաբանված դատական ակտ՝ ապահովելով պատճառաբանված դատական ակտ ստանալու կողմի իրավունքը: Կարծում ենք, որ քննարկվող հարցը մանրամասն գիտական վերլուծության և հետագա մշակման կարիք ունի՝ նկատի ունենալով այն, որ հստակ ձևակերպված և անհրաժեշտ երաշխիքներ նախատեսող կարգավորման պայմաններում նշված քայլը կատարելու դեպքում քաղաքացիական գործեր քննող դատավորները էապես կբեռնաթափվեն:

Բավականին առաջադիմական քայլ է կատարվել գործով վերջնական դատական ակտի հրապարակման կանոնները «պարզեցնելու» ուղղությամբ: Նպատակ ունենալով ինայելու գերձանրաբեռնվածության պայմաններում արդարադատություն իրականացնող դատարանների, վեճի շուտափույթ լուծման ձգտող գործին մասնակցող անձանց ժամանակը, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման մակարդակը և դրանց մատչելիության աստիճանը՝ պարզեցված վարույթի կարգով քննվող գործն ըստ էության լուծող դատական ակտերի հրապարակման համար նախատեսվել է պարզեցված ընթացակարգ: Մասնավորապես, Նախագծի 264 հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ նման կարգավորումը հակասում է ՀՀ Սահմանադրության 63 և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող «իր գործի հրապարակային քննության» իրավունքի հետ:

ՄԻԵԴ-ի նախադեպային ակտերի, ինչպես նաև առաջադեմ որոշ երկրների դատավարական օրենսդրության վերլուծությունը հիմք է

---

<sup>12</sup> Ст. 10 Федерального закон № 45-ФЗ от 02.03.2016 г. «О внесении изменений в Гражданский процессуальный кодекс Российской Федерации и Арбитражный процессуальный кодекс Российской Федерации»: Ուժի մեջ է մտել 01.09.2016 թ.:

տալիս եզրակացնելու, որ կայացված դատական ակտերի մասին տեղեկացնելու այլ ձևերը ևս թույլատրելի են և չեն խախտում հրապարակայնության սկզբունքը:

Այսպես, ՄԻԵԴ-ի «Պրետտոն ընդդեմ Իտալիայի» գործով<sup>13</sup> դատարանը միաձայն որոշել է, որ դատարանի՝ վճիռները դատական մատյանում գրանցելու ընթացակարգը «գործի հրապարակային քննության», «վճռի հրապարակման» պահանջի խախտում չի առաջացրել: Դատարանի կարծիքով՝ Կոնվենցիայի 6(1) հոդվածով հետապնդվող նպատակը (որը արդար դատաքննության երաշխավորման նպատակով դատարանի նկատմամբ հանրային հսկողություն սահմանելն է) դատարանում տեղի ունեցած դատավարության առնչությամբ տվյալ դեպքում ապահովվել է ոչ նվազ չափով, քան կապահովվեր, եթե որոշումն ընթերցվեր դռնբաց դատական նիստի ժամանակ, մանավանդ որ այդ ընթերցումը հաճախ սահմանափակվում է գուտ օպերատիվ դրույթների հրապարակմամբ (պարբ. 27):

«Մոսերն ընդդեմ Ավստրիայի» գործով կայացված վճռի<sup>14</sup> 101-րդ պարբերության մեջ նշվում է. ««Վճիռը հայտարարվում է հրապարակայնորեն» ձևակերպումից կարող է թվալ, որ դատարանում այն բարձրաձայն ընթերցելը պարտադիր է: Սակայն դատարանը համարում է, որ վճիռը հրապարակելու այլ եղանակներ ևս կարող են համապատասխանել Կոնվենցիայի 6(1) հոդվածին»: Ինչպես իրավացիորեն նշում է հոլանդացի դատավարագետ պրոֆ. Ս. Շ. վան Ռին, «բոլոր այն դեպքերում, երբ վճիռը դռնբաց դատական նիստում չի հրապարակվում, կիրառված մյուս միջոցները պետք է ապահովեն բավարար հրապարակայնություն... վճիռը հրապարակելու այլ եղանակներ նախատեսելիս բոլոր պարագաներում պետք է ապահովել վճռի հասանելիությունը ոչ միայն կողմերին, այլ նաև շահագրգիռ հանրությանը»<sup>15</sup>:

Պարզեցված վարույթի կարգով կայացված դատական ակտը դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով, ըստ էության, ապահովվում է դրա հասանելիությունը ոչ միայն կողմերի, այլ նաև ՋԼՄ-ների, քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կազմակերպությունների և քաղաքացիների համար՝ երաշխավորելով արդար դատաքննության երաշխավորման նպատակով դատարանի նկատմամբ հանրային հսկողությունը: Ընդ որում, որպես գործին մասնակցող անձանց համար կայացված ակտի հասանելիության ապահովման լրացուցիչ երաշխիք, Նախագծով նախատեսվել է կայացված դատական ակտը կողմերին ուղարկելու դատարանի պարտականությունը: Ըստ 264 հոդվածի 2-րդ մասի՝ վերջնական դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան

<sup>13</sup> Sté u Pretto and others v. Italy (1983), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57561>:

<sup>14</sup> Sté u Moser v. Austria (2006), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-76956>:

<sup>15</sup> «Reform of the Armenian Code of Civil Procedure», p. 20.

դրա կայացման հաջորդ օրը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Նկատի ունենալով, որ պարզեցված կարգը ենթադրում է ոչ միայն գործերի արագ քննություն և լուծում, այլ նաև վճռի օպերատիվ կատարում<sup>16</sup>, Նախագիծը սահմանել է պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի **օրինական ուժի մեջ մտնելու և դրա դեմ վերաքննիչ բողոք բերելու կրճատ ժամկետներ**: Մասնավորապես նախատեսվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռը, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին որոշումը օրինական ուժի մեջ են մտնում կայացնելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (264 հոդվ., մաս 3), հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը՝ այն կայացնելու օրվանից յոթնօրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (264 հոդվ., մաս 4):

Թեև վերը հիշատակված եվրոպական կանոնակարգի 17 հոդվածը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(95)5 և R(81)7 հանձնարարականները<sup>17</sup> թույլ են տալիս բացառել փոքր չափով դրամական հատուցումների վերաբերյալ գործերով կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, Նախագիծը մշակելիս, այդուհանդերձ, որոշվել է նման քայլի չդիմել՝ բավարարվելով վերաքննիչ բողոքարկման կրճատ ժամկետների սահմանմամբ, ինչպես նաև վճռաբեկ բողոք բերելու հիմքերի սահմանափակմամբ: Նախ՝ Նախագծի 321 հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև դրանց՝ օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի ավարտը: Այնուհետև սահմանափակվել է պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը բողոքարկելու հիմքերի շրջանակը: Մասնավորապես սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարանի բացառապես 324 հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով, այսինքն՝ դատարանի կողմից դատավարական նորմե-

<sup>16</sup> St´u **Матулович В.** Революция в упрощенном производстве // «Юридический справочник руководителя». М., 2012, август // <http://delo-press.ru/articles.php?n=10857>:

<sup>17</sup> St´u Recommendation № R(81)7 of the Committee of Ministers to member states on measures facilitating access to justice (Adopted by the Committee of Ministers on 14 May 1981 at its 68th Session), <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168050e7e4>, Recommendation № R(95)5 of the Committee of Ministers to member states concerning the introduction and improvement of the functioning of appeal systems and procedures in civil and commercial cases (Adopted by the Committee of Ministers on 7 February 1995 at its 528th meeting of the Minister’s Deputies), <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c>:

րի այնպիսի խախտումներ կատարելու հիմքերով, որոնց պարագայում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Ափոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսվել է պարզեցված վարույթի կարգով քաղաքացիական գործերի քննության բավականին ճկուն ընթացակարգ, որը հնարավորություն կտա զգալիորեն կրճատելու քաղաքացիական գործերի քննության ժամկետները, բացառելու պարզ գործերով տևական դատավարությունները, թեթևացնելու առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածությունը, խնայելու դատարանի և կողմերի ժամանակը՝ վերջիններիս համար ապահովելով օպերատիվ, արդյունավետ և ոչ ծախսատար դատական պաշտպանության հնարավորություն: Բոլոր նշված հանգամանքները, մեծ հաշվով, էապես կնպաստեն նաև Հայաստանում արդարադատության որակի բարելավմանը և դատական իշխանության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացմանը:

**Բանալի բառեր** – *պարզեցված ընթացակարգեր, պարզեցված վարույթ, արագացված դատաքննություն, փոքր հայցագին ունեցող գործեր, ապացույցների ներկայացման կարգ, գործի քննություն առանց դատական նիստ հրավիրելու, դատարանների ծանրաբեռնվածություն, գործերի քննության և լուծման օպտիմալացում, արդարադատության արդյունավետություն*

**СЕРГЕЙ МЕГРЯН – Упрощенное производство в проекте Гражданского процессуального кодекса РА.** – В статье рассматривается институт упрощенного производства, предусмотренный в проекте Гражданского процессуального кодекса Армении. Проанализированы сущность и основные особенности данного вида производства, его основные преимущества и роль с точки зрения снижения судебной нагрузки, оптимизации рассмотрения и разрешения гражданских дел и повышения эффективности правосудия.

На основе доктринальных подходов к особенностям рассмотрения дел с небольшим размером исковых требований, а также анализа транснациональных стандартов гражданского процесса, рекомендаций Совета Европы, зарубежного опыта и отечественной судебной практики детально рассмотрены вопросы, касающиеся дел, рассматриваемых в порядке упрощенного производства. Речь идёт также о делах с небольшим размером исковых требований и обстоятельствах, исключающих рассмотрение дела в порядке упрощенного производства. Кроме того, в статье анализируется процессуальный порядок перехода к упрощенному порядку рассмотрения и разрешения дела в суде первой инстанции. Сформулированы и обоснованы некоторые замечания и предложения по усовершенствованию данного вида производства.

Делается вывод, что процедуру упрощенного производства, предусмотренную в проекте ГПК РА, можно считать удачной и соответствующей транснациональным стандартам. Она будет способствовать существенному снижению судебной нагрузки, сокращению временных и финансовых затрат, ускоренному получению судебной защиты и в целом реализует важнейшие задачи судопроизводства – процессуальную экономию и оптимизацию рассмотрения и разрешения гражданских дел.

**Ключевые слова:** упрощенные процедуры, упрощенное производство, ускоренное производство, небольшой размер исковых требований, порядок представления доказательств, рассмотрение дела без судебного заседания, судебная нагрузка, оптимизация рассмотрения и разрешения гражданских дел, эффективность правосудия

**SERGEY MEGHRYAN – *Simplified Procedure in the Draft Civil Procedural Code of the Republic of Armenia.***– The present article is scrutinizing the institution of simplified procedure envisaged in the draft Civil Procedural Code of the Republic of Armenia. The essence and key features of the procedure mentioned, its main advantages and the role in terms of reducing court load, optimization of hearings, settlement of civil cases and enhancing the efficiency of justice are analyzed.

Based on doctrinal approaches towards the issue of consideration of cases with rather small demands in claim as well as analysis of trans-national standards of civil procedure, recommendations of the Council of Europe, foreign practice and domestic case law the author has conducted detailed study on the circle of cases considered through simplified proceedings, the notion and criteria of “small claims”, the circumstances ruling out the discretion to consider and settle the case through simplified proceedings. Along with this, the article scrutinizes the procedural order of moving to simplified proceedings of consideration of the case, the peculiarities of consideration and settlement of the case in the court of first instance, including the special order of presenting and examining the procedural material, publication, entering into force and challenging of the court ruling. Within the article several remarks and suggestions have been formulated and substantiated towards enhancing the specific type of proceedings at stake.

The conclusion is drawn up that the simplified proceedings envisaged in the draft Civil Procedural Code of RA should be considered as successful and in line with trans-national standards of settlement of cases through simplified proceedings. In the author’s opinion, it may be helpful to reduce considerably the court load, to eliminate time and financial expenses of persons involved in the case, expedient granting of judicial protection and realization of the most important tasks of litigation in general – procedural economy and optimization of consideration and settlement of cases.

**Key words:** *simplified proceedings, simplified procedure, speedy procedure, small claims, order of presenting evidences, considering the case without court hearing, court load, optimization of consideration and settlement of civil cases, efficiency of justice*